	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 1/22</i>

ՆՊԱՏԱԿԸ


«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կարգի (այսուհետ՝ Կարգ) նպատակն է սահմանել փողերի լվացմանն ու ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից վարվող քաղաքականությունը, իրականացվող այն պարտադիր միջոցառումները և ընթացակարգերը, որոնք կբացառեն Բանկի միջոցով փողերի լվացումն ու ահաբեկչության ֆինանսավորումը, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները, կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, հաշվառման և պահպանման կարգը, սույն կարգի կատարման հետ կապված Բանկի աշխատակիցների պարտականություններն ու պատասխանատվությունը:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ


Սույն կարգը կիրառվում է Բանկի կառավարման բոլոր մարմինների, ղեկավարների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցների կողմից:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՏՏԱԹՂԹԵՐ

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք	
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ Կանոնակարգ»-ը հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի 09.09.2008թ. թիվ 269-Ն որոշում	
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ տիպաբանությունների» ուղեցույցը հաստատելու մասին ՀՀ ԿԲ նախագահի 11.09.2008թ. թիվ 1/913 Ա որոշում (1-ից 6 տիպաբանություններ)	
ՀՀ ԿԲ նախագահի 2008 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1/913 Ա որոշման մեջ լրացում կատարելու վերաբերյալ 15.01.2010թ. թիվ 1/04 Ա որոշում (7-9 տիպաբանություններ)	
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ տիպաբանություն հաստատելու և հրապարակելու» մասին ՀՀ ԿԲ նախագահի 04.06.2010թ. թիվ 1/520 Ա որոշում (10-րդ տիպաբանություն)	
ՀՀ ԿԲ նախագահի 18.04.2012թ. թիվ 1/351 Ա որոշում (11-րդ տիպաբանություն)	
ՀՀ ԿԲ նախագահի 27.07.2012թ. թիվ 1/760 Ա որոշում (12-րդ տիպաբանություն)	
«Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ նախագահի 03.09.2008թ. թիվ 1/886 Ա որոշում	
«Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ նախագահի 25.11.2008թ. թիվ 1/1154 Ա որոշում	
«Օֆշորային տարածքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ ԿԲ խորհրդի 28.07.2009թ. թիվ 224-Ն որոշում	

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 2/22</i>

«Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարք կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ձևը (թիվ 101 հաշվետվական ձև)» հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի 06.10.2009թ. թիվ 296-Ն որոշում ՀՀ քրեական օրենսգրքի 190 և 217.1 հոդվածներ	
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության բաժնի կանոնակարգ	ACBA 55 REG 15
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ թղթակցային հաշիվների բացման, վարման և փակման ընթացակարգ	ACBA 72 PR 12
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ընթացիկ (հաշվարկային) հաշիվների բացման, վարման, հսկման և փակման ընթացակարգ	ACBA 72 PR 01
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից դրամական փոխանցումների հատուկ համակարգերով գործառնությունների իրականացման կարգ	ACBA 72 ORD 27
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում հաճախորդների հաշիվների բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	LI 72-02
«Լորո» թղթակցային հաշվի բացման համար պահանջվող փաստաթղթերի ցանկ	LI 72-08
«Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկ (ֆիզիկական անձանց համար)	eFO 72-02-10
«Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկ (իրավաբանական անձանց/անհատ ձեռնարկատերերի համար)	eFO 72-02-11
«Ճանաչիր հաճախորդիդ» և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով հարցաթերթիկ (ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների համար)	eFO 75-25-23
«Ճանաչիր հաճախորդիդ» և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով հարցաթերթիկ (ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատությունների համար)	eFO 75-25-24
«Ճանաչիր հաճախորդիդ» և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով հարցաթերթիկ (հատուկ համակարգերով դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար)	eFO 75-25-25
Իրական շահառուի առկայության (բացակայության), հաճախորդի կենսական շահերի կենտրոնի և եկամտի աղբյուրների վերաբերյալ հայտարարություն	eFO 72-02-02
Հաճախորդի կողմից իրականացվող խոշոր կանխիկ գործարքի վերաբերյալ հայտարարություն	eFO 72-12-08
Ստորաբաժանման ֆինանսական անվտանգության գծով օրական հաշվետվություն	eFO 72-02-20
Աշխատակցի ֆինանսական անվտանգության գծով հաշվետվություն	eFO 72-02-21
Ֆինանսական անվտանգության բաժնի ներկայացվող օրական հաշվետվություն	eFO 72-02-22
Ֆինանսական անվտանգության բաժնի կողմից ստորաբաժանումներ ուղարկվող օրական ամփոփ հաշվետվություն	eFO 72-02-23
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ բարձր ռիսկա-	eFO 72-12-09

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 3/22</i>

յին երկրների ցանկը և այդ երկրների նկատմամբ մոտեցումները	
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության գծով հաշվետվական համակարգ	eFO 72-02-04
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ բարձր ռիսկային հաճախորդների և բարձր ռիսկային գործունեության ոլորտների ցանկ	eFO 72-02-05
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության բաժնի կողմից իրականացվող մոնիտորինգների ցանկ	eFO 72-02-06
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության բաժնի կողմից Կենտրոնական գրասենյակի և մասնաճյուղերի ֆինանսական անվտանգության ռիսկի գնահատման համակարգ	eFO 72-02-07
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության բաժնի կողմից մինչև ձևակերպումը հաստատվող փոխանցումների սահմանաչափերը	eFO 72-02-08
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում հաճախորդների և փոխանցումների կասկածելի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ցանկերով ստուգման գործընթացը	eFO 72-02-09
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում հաճախորդների տվյալների թարմացման գործընթացը	eFO 72-02-12
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում ֆինանսական անվտանգության բաժնի կողմից ստորաբաժանումների ստուգումների իրականացման գործընթացը	eFO 72-02-24

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«**Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ**»՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված գույքը.


«**Փողերի լվացում (հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում) (ՓԼ)**»՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելիությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում).

«**Ահաբեկչության ֆինանսավորում (ԱՖ)**»՝ ահաբեկչության կատարման համար ֆինանսական միջոցների տրամադրումը կամ հավաքումը.

«**Միջազգային սանկցիաներ**»՝ երկրների, երկրների ապրանքատեսակների և անձանց նկատմամբ կիրառված էմբարգոները, ֆինանսական միջոցների սառեցման պահանջները.

«**Ֆինանսական անվտանգություն**»՝ Բանկում ներդրված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի և միջազգային սանկցիաների պահպանման համակարգ.

«**Գործարք**»՝ Բանկի և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձանց միջև Բանկի միջոցով կնքված գործարք: Գործարք կարող է համարվել նաև որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում իրավունքներ և պարտականություններ առաջացնող յուրաքանչյուր գործողություն.

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ</i> 13/11/13	<i>Խմբագրություն</i> 5	<i>Էջ</i> 4/22

«Միանգամյա գործարք»՝ գործարք, որի արդյունքում հաճախորդի և Բանկի միջև պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում (գործարար հարաբերություն չի հաստատվում)։

«**Գործարար հարաբերություն**»՝ հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով։ Բանկի հետ գործարար հարաբերությունը չի ներառում Բանկի հետ այն գործունեությունը, որի շրջանակներում Բանկը սեփական կարիքների համար իրականացնում է բանկերի համար օրենքով սահմանված գործունեությունից տարբեր այլ գործունեություն։

«**Խոշոր գործարք**»՝ գործարք կամ միանգամյա գործարք (այդ թվում՝ մեկ օրվա ընթացքում կուտակային), որի արժեքը գերազանցում է 5 միլիոն դրամը։

«**Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն**»՝ գործարք կամ գործարար հարաբերություն, որի դեպքում Օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի ուղեցույցներով, սույն կարգով և Բանկի ներքին իրավական այլ ակտերով սահմանված կամ այլ դեպքերում կասկածվում է, կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ այդ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներառված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ այդ գույքը կապված է ահաբեկչության ֆինանսավորման հետ, ինչպես նաև եթե ֆինանսական միջոցները կամ այլ գույքը կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով։

«**Գործարքն իրականացնող աշխատակից**»՝ Բանկի կենտրոնական գրասենյակի կամ մասնաճյուղի աշխատակից, որն անմիջապես իրականացնում է հաճախորդի բանկային սպասարկումը։

«**Հաճախորդ**» է համարվում Բանկի հետ գործարար հարաբերություններ հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձ, ինչպես նաև այն անձը, որն առաջարկում է Բանկին կնքել միանգամյա գործարք կամ մատուցել գործարքի կատարմանն ուղղված այլ ծառայություններ։

«**Իրական շահառու**»՝ գործարար հարաբերության կամ գործարքի կողմ չհանդիսացող ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է և/կամ որն իրականում տիրապետում է և/կամ վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից գործարքը կատարվում է։ Իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի (գործարար հարաբերության) նկատմամբ և/կամ ի շահ որի իրականացվում է գործարար հարաբերությունը կամ գործարքը։ Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, որը՝

ա) քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) 20 և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել դրա որոշումները,

բ) հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և/կամ ղեկավար մարմնի անդամ,


գ) գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից։

«**Լիազորված անձ**»՝ հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողություններ իրականացնելու լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով հաճախորդի տված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձը, ինչպես նաև այն անձը, որը չունի լիազորագիր, սակայն փաստացի հանդես է գալիս հաճախորդի անունից կամ հանձնարարությամբ, կամ հաճախորդի հաշվին կամ հոգուտ հաճախորդի կատարում է փաստացի գործողություններ։

«**Փոխկապակցված անձ**»՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված անձինք։

«**Հաճախորդի գործարար բնութագիր**»՝ հաճախորդի եկամուտի աղբյուրների, գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի վերաբերյալ Բանկի տեղեկությունների (պատկերացումների) ամբողջությունը։

«**Ճանաչիր հաճախորդի սկզբունք (KYC)**»՝ միջազգային պրակտիկայում ընդունված սկզբունք, որն ենթադրում է հաճախորդի նույնականացման տվյալների հավաքագրման, հաճախորդի գործարար բնութագրի պարզաբանման, վերջինիս վերաբերյալ հավաքագրված տեղեկությունների պարբերաբար

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 5/22</i>

թարմացման պահանջ և կիրառվում է հաճախորդի ու նրա կողմից կատարված գործարքների պատշաճ ուսումնասիրության իրականացման համար.

«**Գործարքի մյուս կողմ**»՝ հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում են գործարքից բխող դրամական միջոցները կամ այլ գույքը.

«**Քաղաքական ազդեցություն ունեցող անձ**»՝ անձ, որը օտարերկրյա պետությունում կամ տարածքում իրականացնում է կամ իրականացրել է բարձրաստիճան մակարդակով պետական, քաղաքական կամ հանրային բնույթի նշանակալից գործառույթներ, մասնավորապես՝

ա) պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,

բ) խորհրդարանի անդամները,

գ) գերագույն դատարանների, սահմանադրական դատարանների անդամները կամ այլ բարձր դատական ատյանների անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքների,

դ) աուդիտորների դատարանների անդամները կամ կենտրոնական բանկերի խորհուրդների անդամները,

ե) դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,

զ) քաղաքական կուսակցությունների ակնառու գործիչները,

է) պետական սեփականություն հանդիսացող կազմակերպությունների վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները.

Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի հանրային գործառույթներ իրականացնող անձանց.

«**Կենսական շահերի կենտրոն**»՝ այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը, և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը.

«**Ահաբեկչության հետ կապված անձ**»՝ ցանկացած անձ կամ կազմակերպություն, որը ներառվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հրապարակած անձանց և կազմակերպությունների կամ ՀՀ կենտրոնական բանկի ներկայացրած ցանկերում, ինչպես նաև ահաբեկչության մեջ կասկածվող, մեղադրվող կամ դատապարտված անձինք.

«**Տիպաբանություն**»՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր սխեմաներ.

«**Բարձր ռիսկի չափանիշ**»՝ Օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, սույն կարգով սահմանված այնպիսի չափանիշներ, որոնք վկայում են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին, այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող և նրանց հետ փոխկապակցված անձինք, ըստ ներկայացնողի արժեթղթերը, այդ թվում՝ ըստ ներկայացնողի չեկային գրքույկները, օֆշորային տարածքները.


«**Ցածր ռիսկի չափանիշ**»՝ Օրենքով կամ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշներ, որոնք վկայում են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին, այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները, պետական մարմինները կամ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպությունները.

«**Գործարար հարաբերության կամ գործարքի կասեցում**»՝ Օրենքով սահմանված կարգով կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք.

«**Գործարար հարաբերության կամ գործարքի իրականացման մերժում**»՝ Օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի կատարման համար նախատեսված գործողությունների չիրականացում.

«**Ֆինանսական միջոցների սառեցում**»՝ Օրենքով սահմանված կարգով ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք.

«**Կեղծ («չել») բանկ**»՝ բանկ, որը գրանցված լինելով որևէ պետությունում, դրա տարածքում փաստացի գտնվելու կամ գործունեության վայր չունի, և որը փոխկապակցված չէ գործող այլ ֆինանսական հաստատությունների հետ:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 6/22</i>

ՉԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը մշակվել է համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի և այլ իրավական ակտերի պահանջների:

1.2. Բանկի տարածքային ստորաբաժանումներում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացի պատասխանատուներն են մասնաճյուղերի գլխավոր հաշվապահները (գլխավոր հաշվապահ չունեցող մասնաճյուղերում՝ կառավարիչները), իսկ կառուցվածքային ստորաբաժանումներում՝ այդ ստորաբաժանումների ղեկավարները:

1.3. Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների և ահաբեկչության ֆինանսավորման աղբյուր հանդիսացող միջոցների շրջանառությունը Բանկում արգելվում է:

1.4. Բանկը ձեռնարկում է միջազգային սանկցիաների պահանջների (մասնավորապես՝ ՄԱԿ-ի, Եվրամիության, Ֆրանսիայի և ԱՄՆ կողմից կիրառված) պահպանման համապատասխան միջոցառումները՝ համբավի ռիսկ չկրելու նպատակով:

1.5. Սույն կարգի հաստատման, ինչպես նաև դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում՝ Բանկը մեկշաբաթյա ժամկետում կարգի մեկ օրինակը ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկ:

1.6. Գործող օրենսդրության մեջ հետագայում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարվելու դեպքում Բանկն առաջնորդվում է այդ փոփոխություններով և/կամ լրացումներով՝ մինչև սույն կարգն օրենսդրության նոր պահանջներին համապատասխանեցնելը:

ՉԼՈՒԽ 2. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԲԱՆԿՈՒՄ, ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ (ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

2.1. Բանկը Օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կարգով սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում իր հաճախորդի կողմից իրականացվող կասկածելի գործարար հարաբերությունները և գործարքները բացահայտելու և կանխելու ուղղությամբ, ինչպես նաև կատարում է Օրենքով սահմանված այլ պարտականություններ:

2.2. Բանկը Օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կարգով սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ՝ Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով և սույն կարգով սահմանված տեղեկությունները, այդ թվում օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները:

2.3. Բանկը, նրա աշխատակիցներն ու ներկայացուցիչներն իրավունք չունեն այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկատվություն է տրամադրվում ՀՀ կենտրոնական բանկ, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այլ տեղեկատվության տրամադրման փաստի մասին:

2.4. Բանկը քրեական հետապնդում իրականացնող մարմիններին Օրենքով և սույն կարգով նշված տեղեկությունները տրամադրում է բացառապես «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

2.5. Ֆինանսական անվտանգության բաժինը ՀՀ կենտրոնական բանկին է տրամադրում հետևյալ գործարքներից ցանկացածի վերաբերյալ հաշվետվություն.

2.5.1. գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամը, բացառությամբ սույն կարգի

2.5.2 ենթակետով սահմանված գործարքների,

2.5.2. անշարժ գույքի հետ կապված գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 50 միլիոն դրամը.

2.5.3. կասկածելի գործարքները կամ գործարար հարաբերությունները՝ անկախ սույն կարգի 2.5.1 և 2.5.2 ենթակետերով նշված գումարների չափերից:


2.6. Անկախ գումարային մեծությունից՝ տեղեկացման ենթակա գործարքներ չեն համարվում.

2.6.1. ՀՀ համախմբված բյուջե և այդ բյուջեից կատարված վճարումները,

2.6.2. միջբանկային շուկայում կատարվող հետևյալ գործարքները.

ա) ՀՀ զանձապետական պարտատոմսերի կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման դեպքում ձեռքբերումները,

բ) ֆինանսական երկրորդային շուկայում երկու մասնագիտացված անձանց միջև կնքվող գործարքները, որոնք կնքվում են իրենց հաշվին և իրենց անունից (օրինակ՝ երկրորդային շուկայում

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ		ACBA 72 ORD 37#6	
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ		<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>

վաճառվող/ձեռք բերվող արժեթղթերը, ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ, սվոփ գործարքները, միջբանկային ավանդները, վարկերը և այլն),

գ) այն գործարքները (գործառնությունները), որոնց վերաբերյալ բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարկային ռեգիստր տրամադրվել է տեղեկատվություն,

2.6.3. Բանկի կողմից սեփական կարիքների համար կատարվող գնումները՝ Բանկի ընթացիկ գործունեության ապահովման նպատակով, բացառությամբ իր հաճախորդներից ֆինանսական ակտիվների գնումների,

2.6.4. կնքված պայմանագրերի շրջանակներում կատարվող գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունները, եթե դրանք չեն առաջացնում պայմանագրի գումարի կամ արժույթի փոփոխություններ:

2.7. Սույն կարգի 2.6 կետի դրույթները չեն տարածվում կասկածելի գործարքների վրա:

ՉՊԻՆ 3. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Գործարար հարաբերությունը կամ գործարքը կարող է համարվել կասկածելի, եթե՝

3.1.1. հաճախորդը գործարքն իրականացնող աշխատակցին (Բանկին) առաջարկում է կնքել (հաստատել) կամ նրա հետ կնքում (հաստատում) է այնպիսի գործարք (գործարար հարաբերություն), որը թեկուզև համապատասխանում է օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին, սակայն տվյալ գործարքով (գործարար հարաբերությամբ) հնարավոր չէ պարզել հաճախորդի ինքնությունը կամ ստանալ տվյալ գործարքի (գործարար հարաբերության) կնքման կամ իրականացման համար Բանկի համար սույն կարգով և/կամ Օրենքով նախատեսված տեղեկություններ,

3.1.2. գործարքի (գործարար հարաբերության) պայմանները չեն համապատասխանում հաճախորդի գործարար բնութագրին, ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման գործարքների (գործարար հարաբերությունների) պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

3.1.3. գործարքն իրականացնող աշխատակցի (Բանկի) համար պարզ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքը (գործարար հարաբերությունը) ակնհայտորեն տնտեսական կամ իրավաչափ նպատակ չի հետապնդում,

3.1.4. Բանկի (գործարքն իրականացնող աշխատակցի) համար ակնհայտ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքի (գործարքների) արժեքը չի գերազանցում սույն կարգի 2.5.1 կամ 2.5.2 ենթակետերով նախատեսված հաշվետվության տրամադրման և սույն կարգի 7.3 կետի «բ» ենթակետով նախատեսված նույնականացման համար անհրաժեշտ սահմանաչափը միայն այն պատճառով, որ հաճախորդը ցանկանում է խուսափել Բանկի կողմից այդ գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրումից կամ նույնականացումից,


3.1.5. ֆիզիկական անձը, որը փոխկապակցված է որևէ իրավաբանական անձի հետ, իր անունից այլ իրավաբանական անձի փոխանցում (տրամադրում) է գումարներ, որն ակնհայտորեն իրականացվում է այդ իրավաբանական անձանց միջև պայմանագրային պարտավորությունների կատարման նպատակով կամ այդ իրավաբանական անձանց միջև այլ կերպ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար,

3.1.6. ըստ իր կատարման տրամաբանության և շարժի (դինամիկայի)՝ գործարքը (գործարար հարաբերությունը) համապատասխանում է միջազգային լավագույն փորձով, ՀՀ կենտրոնական բանկի ներկայացրած «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ տիպաբանությունների ուղեցույց»-ով» և/կամ «Կասկածելի գործարքների չափանիշների վերաբերյալ ուղեցույց»-ով սահմանված դեպքերին:

3.2. ՀՀ կենտրոնական բանկի ներկայացրած ուղեցույցներով կարող են սահմանվել գործարքը կամ գործարար հարաբերությունները կասկածելի համարելու՝ սույն կարգի 3.1 կետում չնշված այլ հիմքեր, ինչպես նաև կասկածելի գործարքի հիմքերը որոշելու այլ չափանիշներ, որոնց հիման վրա Բանկը (գործարքն իրականացնող աշխատակիցը) տվյալ գործարքը (գործարար հարաբերությունը) ճանաչում է կասկածելի:

3.3. Բանկը կարող է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել ՀՀ կենտրոնական բանկ նաև այն դեպքերում, երբ այդ գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում Օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի ներկայացրած ուղեցույցներով, սույն կարգով սահմանված կասկածելի գործարքի հիմքերից և չափանիշներից, սակայն դրա կատարման տրամաբանությունը և շարժը (դինամիկան) հիմք են տալիս ենթադրելու, որ այն իրականացվում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:

3.4. Բանկի (գործարքն իրականացնող աշխատակցի) կողմից գործարքը կամ գործարար հարա-

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ		ACBA 72 ORD 37#6	
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ		<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5 էջ 8/22</i>

բերությունը, այդ թվում՝ դրանց կատարման փորձը պետք է որակվի որպես կասկածելի և դրա մասին սույն կարգով սահմանված հաշվետվությունը տրամադրվի ՀՀ կենտրոնական բանկին՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության հիմքերի կամ չափանիշների հայտնաբերման դեպքում:

3.5. Գործարար հարաբերությունը կամ գործարքը պետք է համարվի կասկածելի՝ անկախ սույն կարգի 3.4 կետի դրույթից, եթե կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գործարար հարաբերությունում կամ գործարքում ներգրավված են այնպիսի ֆինանսական միջոցներ կամ այլ զույք, որոնք կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Բանկի խորհուրդը և գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատու են ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին արդյունավետ համակարգի ձևավորման համար, ապահովում են դրա ընթացիկ աշխատանքն ու վերահսկողությունը:

4.2. Բանկի խորհուրդը ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում՝

ա) հաստատում է ֆինանսական անվտանգության բաժնի և ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները, ինչպես նաև վերահսկողություն իրականացնում այդ ծրագրերի իրականացման նկատմամբ.

բ) անհրաժեշտության դեպքում նախաձեռնում է ՓԼ/ԱՖ կանխարգելման գծով ֆինանսական անվտանգության բաժնի ուսումնասիրություններ, հաստատում է աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը.

գ) հաստատում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին իրավական ակտերը.

դ) ստանում և քննարկում է ֆինանսական անվտանգության բաժնի և/կամ ներքին աուդիտի հաշվետվությունները ներքին իրավական ակտերի կատարման վիճակի մասին՝ իր կողմից սահմանված հաճախականությամբ.

ե) հաստատում է ֆինանսական անվտանգության բաժնի կողմից իրեն ներկայացվող հաշվետվությունները.

զ) հսկում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին համակարգի արդյունավետության ուսումնասիրության իրականացումը:

4.3. Բանկի գլխավոր գործադիր տնօրենը ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում՝

ա) ապահովում է ներքին իրավական ակտերի ամբողջական ու արդյունավետ կիրառումը.

բ) ապահովում է Խորհրդի սահմանած ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ընթացակարգերի ներդրման, ինչպես նաև դրանց ընթացիկ արդյունավետ իրականացման աշխատանքները.

գ) խորհրդի համաձայնությամբ՝ նշանակում և աշխատակիցների հանձնարում է ֆինանսական անվտանգության բաժնի պետին և աշխատակիցներին.

դ) ապահովում է Բանկի աշխատակիցների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ներքին իրավական ակտերի, ինչպես նաև եթիկայի կանոնների լիարժեք տիրապետումը.

ե) ֆինանսական անվտանգության բաժնի հետ մեկտեղ ապահովում է իր աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում պատշաճ ուսուցումը և վերապատրաստումը.

զ) ապահովում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության, այդ թվում՝ պարզեցված կամ հավելյալ ուսումնասիրության, ընթացիկ մոնիտորինգի, ինչպես նաև տեղեկատվության հաշվառման, հավաքագրման ու թարմացման իրականացումը.


է) կազմակերպում է ֆինանսական անվտանգության բաժնին անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովվածությունը.

ը) իրականացնում է ֆինանսական անվտանգության բաժնի ուսումնասիրությունների, աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները.

թ) իրականացնում է սույն կարգով, ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ:

ԳԼՈՒԽ 5. ՀՍԿՈՂ ԱՆՁԸ, ՆՐԱ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Բանկում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմամբ զբաղվում է

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 9/22</i>

Ֆինանսական անվտանգության բաժինը:

5.2. Ֆինանսական անվտանգության բաժնի պետը և աշխատակիցները պետք է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած կարգով և մասնագիտական համապատասխանության չափանիշների հիման վրա անցնեն որակավորում:

5.3. Ֆինանսական անվտանգության բաժնի պետը և աշխատակիցները պետք է համապատասխանեն Բանկի կողմից սահմանված մասնագիտական որակավորման չափանիշներին, ունենան բարձրագույն կրթություն և առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ:

5.4. Ֆինանսական անվտանգության բաժնի պետին և աշխատակիցներին պետք է անմիջականորեն հասանելի լինեն հաճախորդի հաշիվներին և կատարված գործառնություններին վերաբերող բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ վարկային գործեր, աշխատանքային փաստաթղթեր, պայմանագրեր և այլն):

5.5. Ֆինանսական անվտանգության բաժնի պետը և աշխատողներն իրավունք ունեն.

5.5.1. այլ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների հետ ինքնուրույն իրականացնել նամակագրություն այն հարցերի շուրջ, որոնք առնչվում են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ.

5.5.2. պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունները (ձև 101) ճշգրտելու նպատակով գործարքն իրականացրած աշխատակցից ինքնուրույն ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև հաճախորդների, լիազորված անձանց և իրական շահառուների վերաբերյալ պարզաբանումներ պահանջել այլ ստորաբաժանումների համապատասխան աշխատակիցներից.

5.5.3. Բանկի խորհրդին անմիջականորեն ներկայացնել Բանկի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ծագած խնդիրները:

5.6. Ֆինանսական անվտանգության բաժնի պետը և աշխատակիցները պարտավոր են.

5.6.1. սույն կարգով սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկ տրամադրել պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունները.

5.6.2. մշակել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին իրավական ակտերը, դրանք ներկայացնել Բանկի խորհրդի հաստատմանը.

5.6.3. իրականացնել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին իրավական ակտերի արդյունավետության մոնիտորինգ, առաջարկներ ներկայացնել դրանց արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ.

5.6.4. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հարցերով ապահովել Բանկի կապը ՀՀ կենտրոնական բանկի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև իրավապահ մարմինների, հաշվետվություն տրամադրող այլ անձանց, այլ մարմինների և անձանց հետ.

5.6.5. կասկածելի գործարար հարաբերությունների կամ գործարքների բացահայտման նպատակով իրականացնել ֆինանսական վերլուծություններ և այլ գործողություններ.

5.6.6. հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում իրականացնել հաճախորդի հետ գործարքների մոնիտորինգ, հավաստիանալու համար նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկատվության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ եկամուտների աղբյուրի իսկության հարցում.

5.6.7. կազմակերպել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում աշխատակիցների ներքին ուսուցումը և պարբերաբար վերապատրաստումը, իրականացնել ուսուցման ծրագրերի ընթացքի ու արդյունքների մոնիտորինգ.

5.6.8. հետևել գործարար հարաբերությունների ընթացիկ մոնիտորինգին և պարբերաբար վերանայել տեղեկությունների ճշգրտման ու թարմացման ընթացքը.


5.6.9. ապահովել Բանկի հաճախորդների դասակարգումը՝ ըստ ռիսկի աստիճանի, իրականացնել բարձր ռիսկի չափանիշների հետ գործարար հարաբերությունների ընթացիկ մոնիտորինգ.

5.6.10. կայացնել որոշում գործարար հարաբերությունը կամ գործարքը կասեցնելու, կամ իրականացումը մերժելու, ահաբեկչության հետ կապված ֆինանսական միջոցները սառեցնելու հարցի վերաբերյալ, այդ հարցը, ըստ անհրաժեշտության, քննարկել հաճախորդներին սպասարկող աշխատակցի հետ, իսկ տարածայնություններ առաջանալու դեպքում կայացնել վճռական որոշում.

5.6.11. իրականացնել տեղեկատվության հաշվառման և պահպանման մոնիտորինգ.

5.6.12. բանավոր կամ գրավոր կերպով օժանդակել և խորհրդատվություն ներկայացնել Բանկի խորհրդին և գլխավոր գործադիր տնօրենին ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված իրենց գործառնությունները կատարելու հարցում.

5.6.13. մինչև ձևակերպումը ստուգել և հաստատել «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության բաժնի կողմից մինչև ձևակերպումը հաստատվող փոխանցումների

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 10/22</i>

սահմանաչափերը» [eFO 72-02-08](#) փաստաթղթով սահմանված փոխանցումները.

5.6.14. ներկայացնել առաջարկություններ Բանկում «ճանաչիր հաճախորդիդ» սկզբունքի կիրառման և կատարելագործման նպատակով.

5.6.15. ձեռնարկել համապատասխան միջոցառումներ Բանկում միջազգային սանկցիաների պահպանման համար.

5.6.16. իրականացնել սույն կարգով, այլ ներքին իրավական ակտերով սահմանված կամ իրեն հանձնարարված այլ գործառույթներ:

5.7. Ֆինանսական անվտանգության բաժնի պետը և աշխատակիցները պատասխանատվություն են կրում սույն կարգով սահմանված իրենց պարտականություններն անպատշաճ կատարելու համար:

5.8. Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակիցներն իրավունք ունեն դիմելու Ֆինանսական անվտանգության բաժնի՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հետ առնչվող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:

5.9. Բանկը և նրա աշխատակիցները (ղեկավարները) չեն կարող ենթարկվել քրեական, վարչական, քաղաքացիական կամ այլ պատասխանատվության Օրենքով նախատեսված իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար:

5.10. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման համար Ֆինանսական անվտանգության բաժնի, համաձայն ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության բաժնի կողմից իրականացվող մոնիտորինգների ցանկ»-ի [eFO 72-02-06](#) և ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում ֆինանսական անվտանգության բաժնի կողմից ստորաբաժանումների ստուգումների իրականացման գործընթացը» փաստաթղթի [eFO 72-02-24](#), ուսումնասիրում է Բանկի իրականացրած գործարքների (գործարար հարաբերությունների) կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ու աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը Օրենքին, Օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական այլ ակտերին և Բանկի ներքին իրավական ակտերին և այդ ուսումնասիրությունների արդյունքների, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի ներկայացրած այլ հարցերի վերաբերյալ Բանկի գլխավոր գործադիր տնօրենին և խորհրդին ներկայացնում է ամփոփ հաշվետվություններ ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության գծով հաշվետվական համակարգ» փաստաթղթով [eFO 72-02-04](#) սահմանված կարգով և պարբերականությամբ:

5.11. Ֆինանսական անվտանգության բաժնի պետը և աշխատակիցները ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով Բանկի կողմից ներկայացվում են գրանցման ՀՀ կենտրոնական բանկ և ստանում հաշվառման համար և անհատական նույնականացնող «բանալի»:

5.12. Ֆինանսական անվտանգության բաժնի զնահատում է Կենտրոնական գրասենյակի և մասնաճյուղերի Բանկի կողմից ֆինանսական անվտանգության գծով կրած ռիսկն ըստ ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության բաժնի կողմից Կենտրոնական գրասենյակի և մասնաճյուղերի ֆինանսական անվտանգության ռիսկի զնահատման համակարգ» փաստաթղթի [eFO 72-02-07](#)՝ ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության գծով հաշվետվական համակարգ» փաստաթղթով [eFO 72-02-04](#) սահմանված ժամկետներում:

5.13. Ֆինանսական անվտանգության բաժնի թղթակից բանկերի և դրամական փոխանցումների հատուկ համակարգերի ՓԼ/ԱՖ տեսանկյունից ռիսկի զնահատման համար կազմում է ««ճանաչիր հաճախորդիդ» և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով հարցաթերթիկները» [eFO 75-25-23](#), [eFO 75-25-24](#) և [eFO 75-25-25](#):


5.14. Ֆինանսական անվտանգության բաժնի յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին կազմում և մասնաճյուղեր, Հաճախորդների սպասարկման, Քարտային հաշիվների սպասարկման, Միջբանկային և միջմասնաճյուղային հաշվարկների բաժիններ է ուղարկում «Ֆինանսական անվտանգության բաժնի կողմից ստորաբաժանումներ ուղարկվող օրական ամփոփ» հաշվետվություն [eFO 72-02-23](#), որը պարունակում է հաճախորդների տվյալների բազայում հայտնաբերված սխալների, հաճախորդների և իրենց կողմից կատարված գործարքների վերաբերյալ հարցումներ և այլ տեղեկատվություններ:

ՂԼՈՒԽ 6. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվության մեջ նշվում են՝

6.1.1. հաճախորդի, լիազորված անձի, գործարքի մյուս կողմի, կասկածելի գործարքի դեպքում՝ նաև իրական շահառուի տվյալները, ներառյալ՝

ա) ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսանալու դեպքում՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, քաղաքացիությունը, անձը հաստատող փաս-

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 11/22</i>

տաթղթի սերիան, համարը և տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ նաև պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը,

բ) իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման վկայականի համարը, իսկ ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվության ներկայացման դեպքում՝ նաև հարկ վճարողի հաշվառման համարը,

գ) հաճախորդի բանկային հաշվի համարը.

6.1.2. գործարքի առարկայի նկարագրությունը.

6.1.3. գործարքի գինը (արժեքը).

6.1.4. գործարքի կնքման ամսաթիվը:

6.2. Կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի մասին հաշվետվության մեջ նշվում են նաև գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի համարելու հիմքը, չափանիշը, նկարագրությունը, ինչպես նաև գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցված, մերժված լինելու կամ ահաբեկչության հետ կապված անձանց եկամուտները սառեցված լինելու հանգամանքը:

6.3. Հաշվետվությունները պետք է ներկայացվեն հերթական համարով, ֆինանսական անվտանգության բաժնի պետի ստորագրությամբ: Հաշվետվության մեջ նշվում է Բանկի հաշվառման համարը ՀՀ կենտրոնական բանկում:

6.4. Գործարար հարաբերությունում կամ գործարքում հաճախորդի, լիազորված անձի, գործարքի մյուս կողմի կարգավիճակում պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին հանդես գալու դեպքում հաշվետվության մեջ նշվում է միայն այդ մարմնի անվանումը:

6.5. Հաշվետվության տրամադրումը կարող է կատարվել թղթային, իսկ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքում՝ նաև (կամ) էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով հաշվետվության ներկայացումը կատարվում է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 06.10.2009թ-ի 296-Ն որոշման պահանջների:

6.6. Բանկի խորհրդին ֆինանսական անվտանգության բաժնի կողմից ներկայացվող հերթական հաշվետվությունը ներկայացվում է առնվազն կիսամյակը մեկ անգամ և նվազագույնը ներառում է՝

ա) պարտադիր տեղեկացման ենթակա, կասկածելի գործարքների ու գործարար հարաբերությունների թիվը, ինչպես նաև կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) համառոտ նկարագրությունը.

բ) այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն ներկայացվել որպես կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ.

գ) Բանկի կողմից կասեցված կամ իրականացումը մերժված գործարար հարաբերությունների և գործարքների թիվը և համառոտ նկարագրությունը, կասեցված գործարքների արժեքը.

դ) սառեցված ֆինանսական միջոցների չափը.


ե) ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

6.7. ՓԼ/ԱՖ կանխարգելման գծով Բանկի գլխավոր գործադիր տնօրենին, ինչպես նաև ստորաբաժանումների միջև ներկայացվող հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը և կարգը սահմանվում է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական անվտանգության գծով հաշվետվական համակարգ» փաստաթղթով [eFO 72-02-04](#):

ԳԼՈՒԽ 7. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՇԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

7.1. Հաճախորդի համար հաշիվ բացելու և վարելու դեպքում գործարքն իրականացնող աշխատակիցը պարտավոր է պարզել հաճախորդի՝ Օրենքով, իրավական ակտերով, սույն կարգով և Բանկի ներքին իրավական այլ ակտերով նախատեսված տրամադրման ենթակա տեղեկությունները:

7.2. Հաճախորդի հետ որևէ գործարար հարաբերություն կարող է հաստատվել կամ միանգամյա գործարք կնքվել միայն Բանկի կողմից նույնականացման համար սույն գլխի 7.4 կետով սահմանված փաստաթղթերը (տեղեկությունները) ստանալուց և դրանց իսկությունը ստուգելուց հետո: Բանկը կարող է ձեռք բերել Օրենքով և սույն կարգով նույնականացման համար պահանջվող տեղեկությունները և ստուգել դրանց իսկությունը նաև գործարար հարաբերություն հաստատելու կամ միանգամյա գործարք կատարելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ ժամկետում, եթե արդյունավետորեն կանխարգելված է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ռիսկը, և դա անհրաժեշտ է բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 12/22</i>

7.3. Բանկը (գործարքն իրականացնող աշխատակիցը) նույնականացնում է իր հաճախորդներին և ստուգում նրանց ինքնությունը՝ իրավասու աղբյուրներից ստացված արժանահավատ փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության հիման վրա, եթե՝

ա) հաստատվում են գործարար հարաբերություններ.

բ) կատարվում է միանգամյա գործարք, այդ թվում՝ ներպետական կամ միջազգային դրամական փոխանցում, որի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկին համարժեք դրամը կամ արտարժույթը, եթե խստացնող այլ դրույթ սահմանված չէ այլ իրավական ակտերով.

գ) կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկատվության հավաստիության կամ ամբողջականության մասին.

դ) կասկածներ են առաջանում փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ:

7.4. Հաճախորդներին նույնականացնելիս և ինքնությունը ստուգելիս՝

ա) ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթղթի, ինչպես նաև բացառապես լուսանկարով՝ պետական համապատասխան իրավասու մարմնի տված այլ վավեր պաշտոնական փաստաթղթերի հիման վրա պահանջվող տեղեկատվությունն առնվազն պետք է ներառի անձի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բնակության վայրը, ծննդյան ամսաթիվը, վայրը, իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ նաև պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ.

բ) իրավաբանական անձանց համար պահանջվող տեղեկատվությունը պետք է առնվազն ներառի իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

7.5. Հաշվի բացման փաստաթղթերում անճշտություններ կամ անհամապատասխանություններ նկատելու կամ գործարքն իրականացնող աշխատակցի մոտ կասկածներ առաջանալու դեպքում աշխատակիցը խնդիրը ներկայացնում է իր ստորաբաժանման ղեկավարին (մասնաճյուղերում՝ մասնաճյուղի գլխավոր հաշվապահին, գլխավոր հաշվապահ չունեցող մասնաճյուղերում՝ կառավարչին)՝ վերջինս էլ հիմնավոր կասկածներ ունենալու դեպքում՝ Բանկի գլխավոր հաշվապահին, որն իրավասու է թույլատրելու կամ մերժելու հաշվի բացումը:

7.6. Բանկն անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի պարզելու իրական շահառուի առկայությունը և առկայության դեպքում, սույն գլխի 7.4 կետին համապատասխան, նույնականացնի ու ստուգի նրա ինքնությունը:


7.7. Բանկը հաճախորդի (լիազորված անձի) հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, սույն կարգով սահմանված բարձր ռիսկի չափանիշի առկայության դեպքում, իրական շահառուի առկայությունը պարզում է հաճախորդի (լիազորված անձի) հայտարարության հիման վրա՝ [eFO 72-02-02](#) փաստաթղթով ներկայացվող ձևի համաձայն կամ «ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկներով [eFO 72-02-10](#), [eFO 72-02-11](#): Գործարար հարաբերության ընթացքում սույն կետով նախատեսված հայտարարության ձևը հաճախորդը լրացնում (փոփոխում) է միայն իրական շահառուի ի հայտ գալու կամ իրական շահառուի փոփոխության դեպքում:

7.8. Հաճախորդի նույնականացման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները պետք է ստուգվեն գործարքն իրականացնող աշխատակցի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ Ֆինանսական անվտանգության բաժնի կամ այլ ստորաբաժանումների կողմից: Ստուգումը կարող է չներառել նույնականացնող բոլոր տեղեկությունների ստուգումը, սակայն պետք է բավարար լինի հաճախորդի իրական ինքնությունը պարզելու համար: Այդ նպատակով Բանկի կողմից կարող են օգտագործվել ինչպես փաստաթղթային, այնպես էլ ոչ փաստաթղթային ստուգման մեթոդներ:

7.9. Եթե հաճախորդի կողմից հանդես է գալիս լիազորված անձ, ապա Բանկը, սույն գլխի 7.4 կետին համապատասխան, պարտավոր է նաև նույնականացնել այդ անձին, ստուգել նրա ինքնությունը և հաճախորդի անունից հանդես գալու նրա լիազորությունը:

7.10. Բանկում հաճախորդի հետ նոր գործարար հարաբերությունների հաստատման կամ հաճախորդի կողմից միանգամյա գործարքի կատարման դեպքում նույնականացումը պետք է իրականացվի բացառապես գործող (վերջին խմբագրությամբ և ժամկետում) փաստաթղթերով:

7.11. Եթե հաճախորդը կամ գործարքի մյուս կողմն օտարերկրյա իրավաբանական անձ է կամ օտարերկրյա ֆիզիկական անձ կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձ, ապա Բանկն սույն կարգով և Բանկի ներքին իրավական այլ ակտերով սահմանված

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 13/22</i>

կարգով պարտավոր է պարզել և գրառել նաև այդ անձանց կենսական շահերի կենտրոնը և եկամտի աղբյուրները՝ կիրառելով [eFO 72-02-10](#), [eFO 72-02-11](#) կամ [eFO 72-02-02](#) փաստաթղթերը: Հավաքագրված տեղեկատվությունը մուտքագրվում է հաճախորդների տվյալների բազա:

7.12. Գործարար հարաբերությունում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս Բանկը պետք է նվազագույնը՝

ա) ստուգի գործարքների միջև առկա փոխադարձ կապը, բացահայտի այդ կապի հնարավոր սխեմաները, ինչպես նաև որոշի, թե ինչ նպատակ ունեն նշված գործարքները.

բ) ստուգի, թե արդյոք իրականացվող գործարքների էությունը համապատասխանում է հաճախորդի կողմից իրականացվող գործունեության տեսակներին.

գ) հավաքագրի հաճախորդի եկամտի աղբյուրների վերաբերյալ հնարավոր տեղեկություններ.

դ) համադրի հաճախորդի տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը, ծավալները.

ե) գնահատի գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերը՝ կասկածելի գործարքների ու գործարար հարաբերությունների հիմքերի և չափանիշների հետ համադրություն իրականացնելու միջոցով.

զ) ստուգի՝ արդյո՞ք առկա են այնպիսի գործարար հարաբերություններ և (կամ) միանգամյա գործարքներ, որոնցով հաճախորդը նպատակ ունի խուսափել Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկին հաշվետվություն տրամադրելու պարտականության կատարումից.

է) ճշտի որոշակի միավոր ժամանակահատվածում գործարքների տեսակները, հաճախականությունը և ժամանակագրությունը.

ը) իրականացնի գործարքի կողմերի, ստացողի, իրական շահառուի, ինչպես նաև լիազորված անձի հաշվառում և իրականացնի համադրում հաճախորդների փոխկապակցվածությունը պարզելու նպատակով.

թ) իրականացնի իր ներքին իրավական ակտով սահմանված այլ միջոցառումներ:

7.13. Բանկն առանձնակի ուշադրություն է դարձնում այն հաճախորդներին, որոնք համաձայն ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ բարձր ռիսկային հաճախորդների և բարձր ռիսկային գործունեության ոլորտների ցանկ»-ի [eFO 72-02-05](#) իր համար հանդիսանում են բարձր ռիսկ առաջացնող հաճախորդներ:

7.14. Բանկը պետք է միջոցառումներ ձեռնարկի պարզելու համար, թե արդյոք հաճախորդը հանդիսանում է քաղաքական ազդեցություն ունեցող անձ կամ նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ փոխկապակցված այլ անձ, կամ առկա՞ է բարձր ռիսկի այլ չափանիշ:

7.15. Բարձր ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները՝

ա) օֆշորային երկրում և/կամ տարածքում գրանցված (գործունեություն իրականացնող) իրավաբանական անձ կամ բնակվող ֆիզիկական անձ հաճախորդները և նրանց հետ փոխկապակցված անձինք.

բ) հաճախորդի գործարար հարաբերության կամ միանգամյա գործարքի կապը այնպիսի պետությունների (տարածքների) հետ (Կենտրոնական բանկի և համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված ցանկերի համաձայն), որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից հրապարակված այն երկրների հետ, որոնց նկատմամբ կիրառվում են պատժամիջոցներ:

գ) հաճախորդի բնակվելը (գտնվելը) սույն կետի 2-րդ ենթակետում նշված պետություններում (տարածքներում).

դ) բարեգործական և շահույթ չհետապնդող կազմակերպությունները.


ե) ըստ ներկայացնողի արժեթղթերը, այդ թվում՝ ըստ ներկայացնողի չեկային գրքույկները, որոնք շրջանառվում են գործարար հարաբերության ընթացքում կամ հանդիսանում են միանգամյա գործարքի առարկա.

զ) քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների, նրանց հետ փոխկապակցված անձանց հետ գործարար հարաբերությունը կամ միանգամյա գործարքը.

է) սահմանափակ թվով հատուկ կատեգորիայի հաճախորդների համար անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը.

ը) այն դեպքերը, երբ առաջանում են նույնականացման համար նախկինում ձեռք բերված տվյալների ճշգրտության և համարժեքության վերաբերյալ կասկածներ, այդ թվում՝ իրական շահառուների առկայության և նրանց մասին տվյալների իսկության հետ կապված.

թ) այն դեպքերը, երբ հայտնի է դառնում, որ հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատումը կամ գործարքի կատարումը մերժվել է այլ ֆինանսական հաստատության կողմից.

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 14/22</i>

ժ) հաճախորդները, որոնց հաշիվներով իրականացվում են միջոցների հաճախակի և անբացատրելի շարժեր դեպի տարբեր ֆինանսական հաստատություններ.

ժա) առանց առերես շփման գործարար հարաբերությունների հաստատումը կամ միանգամյա գործարքի կատարումը էլեկտրոնային եղանակով կամ թղթակցության կարգով (առանց առերես շփման հարաբերությունների).

ժբ) կանխիկ դրամի մեծածավալ շրջանառություն իրականացնող հաճախորդը, եթե այն բնորոշ չէ վերջինիս գործարար կերպարին.

ժգ) այնպիսի հաշիվով կամ միջոցով գործարար հարաբերությունը կամ միանգամյա գործարքը, որոնցով 6 ամսից ավելի որևէ գործարք չի կատարվել.

ժդ) թղթակցային բանկային հարաբերությունները.

ժե) հաճախորդի վարկավորումը, երբ տրամադրվող վարկերն ապահովված են լինում Բանկում ներդրված ավանդով:

7.16. Բարձր ռիսկի չափանիշները որոշելու համար կարող են հաշվի առնվել նաև հետևյալ հանգամանքները՝

ա) հաճախորդը ՀՀ քաղաքացի կամ ռեզիդենտ չէ, կամ հաճախորդի նախկին կամ ներկա քաղաքացիությունը կամ ռեզիդենտությունը ՓԼ/ԱՖ առումով բարձր ռիսկ է ենթադրում.

բ) հաճախորդը նախկինում ներգրավված է եղել գործարար հարաբերությունում կամ գործարքում, որը ՓԼ/ԱՖ տեսանկյունից կասկածելի է եղել.

գ) իրավաբանական անձի հաշիվները, միջոցները կամ հեղինակությունը օգտագործվում են ֆիզիկական անձի ակտիվների շրջանառության նպատակով.

դ) իրավաբանական անձի կառուցվածքը կամ կառավարումը առանց հիմնավոր պատճառի բարդ է.

ե) իրավաբանական անձի մասնակիցներին հնարավոր չէ կամ դժվար է բացահայտել.

զ) հաճախորդ իրավաբանական անձը թողարկում է ըստ ներկայացնողի արժեթղթեր:

7.17. Բարձր ռիսկի չափանիշները առկայությունը որոշվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում: Բարձր ռիսկի չափանիշները պարզելու և գնահատելու նպատակով Բանկի աշխատակիցը համադրում է՝

ա) հաճախորդին նույնականացնող տվյալները.

բ) հաճախորդի գործարար բնութագիրը.

գ) հաճախորդի գործարար հարաբերությունները.

դ) հաճախորդի միանգամյա գործարքների բնույթը և նպատակը.

ե) հանրամատչելի աղբյուրներից ստացված տեղեկությունները.

զ) այլ հանգամանքներ:

7.18. Առանց առերես շփման գործարար հարաբերություններ հաստատելիս կամ գործարքներ կնքելիս Բանկը նվազագույնը իրականացնում է հետևյալ լրացուցիչ միջոցառումները՝

ա) հաշվարկների կատարումը միայն անկանխիկ ձևով՝ բացառությամբ վճարային տերմինալների, բանկոմատների միջոցով իրականացվող կանխիկ վճարումների.

բ) պահանջում է լրացուցիչ փաստաթղթեր, ինչպիսիք են՝ պայմանագրեր, վճարումների ստացականներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր:

7.19. Քաղաքական ազդեցություն ունեցող անձի առկայության դեպքում Բանկը պետք է նաև.

ա) ստանա Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կամ նրա տեղակալի հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն եղել է կամ դառնում է քաղաքական ազդեցություն ունեցող անձ.


բ) ձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ հաճախորդի կամ իրական շահառուի եկամուտների (ուճեցվածքի) և ֆինանսական միջոցների աղբյուրը պարզելու համար.

գ) իրականացնի գործարար հարաբերությունների ընթացիկ հավելյալ ուսումնասիրություն:

7.20. Անձի՝ քաղաքական ազդեցություն ունենալու փաստը որոշելու նպատակով Բանկը (գործարքն իրականացնող աշխատակիցը) կարող է իրականացնել հետևյալ գործողությունները՝

ա) ուսումնասիրել հաճախորդի կողմից հաշիվ բացելու ժամանակ Բանկին տրամադրված տեղեկատվությունը.

բ) հնարավոր հաճախորդներից տեղեկությունների հարցում կատարել կամ հաճախորդների ու նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեության բնույթի վերաբերյալ ստանալ տվյալներ.

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 15/22</i>

գ) ուսումնասիրել և օգտագործել հրապարակային տեղեկատվության և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ առկա մասնավոր տվյալների բազաներ (ՈՒՌՈՂ-2եք, Ֆակտիվա Դոու Ջոնս և այլն):

7.21. Ցածր ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները՝

ա) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները.

բ) պետական մարմինները.

գ) տեղական ինքնակառավարման մարմինները.

դ) պետության կողմից հիմնադրված կազմակերպությունները.

ե) ՀՀ համախմբված բյուջե կատարվող վճարումները.

զ) հանրային ծառայությունների դիմաց կատարվող վճարումները:

7.22. Գործարքն իրականացնող աշխատակիցը ցածր ռիսկի չափանիշների առկայության դեպքում կարող է իրականացնել հաճախորդի պարզեցված ուսումնասիրություն՝ հաճախորդին կամ իրական շահառուին նույնականացնելիս կամ նրա ինքնությունը ստուգելիս:

7.23. Հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը ֆիզիկական անձանց համար նվազագույնը ներառում է հետևյալ տեղեկությունների պարզումը և հաշվառումը՝

ա) անունը, ազգանունը.

բ) հաշվի համարը՝ առկայության դեպքում.

գ) անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

7.24. Հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը իրավաբանական անձանց համար նվազագույնը ներառում է հետևյալ տեղեկությունների պարզումը և հաշվառումը՝

ա) իրավաբանական անձի անվանումը.

բ) պետական գրանցման վկայականի համարը.

գ) բանկային հաշիվները տնօրինելու իրավասություն ունեցող անձին նույնականացնող տեղեկությունները:

7.25. Բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում կամ խոշոր գործարք կատարելիս գործարքն իրականացնող աշխատակիցը պետք է իրականացնի հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն, մասնավորապես.

ա) պահանջի լրացուցիչ պաշտոնական պետական փաստաթղթեր, չընդունի հավաստելու նպատակով ներկայացվող բանավոր հայտարարությունները, առավել ամբողջական ու խորացված ստուգի հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատելիս պահանջվող փաստաթղթերի (տեղեկությունների) իսկությունը.

բ) տվյալների բազաներով կատարի հաճախորդի, գործարար հարաբերության և գործարքի վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն.

գ) հաշվետվություն տրամադրող այլ անձանց կամ այլ, այդ թվում՝ օտարերկրյա գործընկերներին կատարի հարցումներ՝ ճշտելու համար հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների վերաբերյալ տեղեկություններ.

դ) լիարժեք բացահայտի գործարքի իրական շահառուին, գործարքի էությունը և բնույթը.


ե) ձեռնարկի այլ միջոցներ հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների ու գործարքների վերաբերյալ իրական ու ամբողջական պատկերացում կազմելու համար:

7.26. Եթե հավելյալ ուսումնասիրության միջոցով Բանկը հաճախորդի կամ գործարքի վերաբերյալ իրական ու ամբողջական պատկերացում չի կազմում, ապա գործարքը (գործարար հարաբերությունը) դիտարկվում է որպես կասկածելի, և իրականացվում են կասկածելի գործարքներին վերաբերվող միջոցառումներ:

7.27. Գործարքն իրականացնող աշխատակիցները, Ֆինանսական անվտանգության բաժինը պարտավոր են լրացուցիչ դիտանցում իրականացնել բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքների (գործարար հարաբերությունների) նկատմամբ, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն:

7.28. Բանկը պետք է գործարար հարաբերությունը դադարեցնելուց կամ գործարքը կատարելուց հետո առնվազն 5 տարի, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում ավելի երկար ժամկետով պահպանի 7.27 կետով սահմանված գործարքների (գործարար հարաբերությունների) տվյալները և դրանք ՀՀ կենտրոնական բանկի հարցման հիման վրա տրամադրի նրան:

7.29. Հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատման, գործարքի կամ միանգամյա գոր-

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ</i> 13/11/13	<i>Խմբագրություն</i> 5	<i>Էջ</i> 16/22

ծարքի կատարման ընթացքում հարկավոր է նաև առաջնորդվել ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՆ ԲԱՆԿ» ՓԲԸ բարձր ռիսկային երկրների ցանկը և այդ երկրների նկատմամբ մոտեցումներ» [eFO 72-12-09](#) փաստաթղթով:

ՉԼՈՒԽ 8. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՏՈՒԳՈՒՄԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ԹԱՐՄԱՑՈՒՄԸ

8.1. Հաճախորդների կողմից տրամադրված տեղեկատվության ստուգումը (անձը հաստատող փաստաթղթի տվյալները, գործարքների կատարման հիմնավորող փաստաթղթերը և այլն) իրականացնելիս գործարքն իրականացնող աշխատակիցների կողմից անհրաժեշտության դեպքում կարող են ձեռնարկվել հետևյալ միջոցառումները.

ա) պահանջել պետական գրանցող մարմնից և/կամ հաճախորդից վերջինիս հիմնադրումը հաստատող փաստաթղթերի միջոցով համապատասխան հաստատումներ հաճախորդի գոյության իրավական հիմնավորման և նրա կազմակերպարավական ձևի, ներառյալ՝ տեղեկատվություն հաճախորդի անվան, իրավաբանական հասցեի և տնօրենների մասին.

բ) ճշտել հաճախորդի անունից հանդես գալու հավակնություն ունեցող անձի իրավասությունների հավաստիությունը (այդ թվում՝ նաև նոտարական վավերացված փաստաթղթերի միջոցով և անձը հաստատող փաստաթղթի հիման վրա):

8.2. Երբ ներկայացուցիչը կամ լիազորված անձը գործում են հաճախորդի անունից, Բանկը նրանից պահանջում է օրենքով սահմանված կարգով վավերացված փաստաթուղթ՝ ներկայացուցչի կամ լիազորված անձի վերաբերյալ, փորձում է պարզել այդ բանկային հաշվի կամ գործառնության իրական շահառուին, ինչպես նաև հավաքագրել ներկայացուցչի կամ լիազորված անձի վերաբերյալ սույն կարգով պահանջվող տեղեկությունները, բացի այդ, հնարավորության սահմաններում, հաճախորդից հեռախոսազանգի կամ այլ միջոցներով ստացվում է գործառնությունը կատարելու հաստատում: Այդպիսի գործարքները կարող են կատարվել միայն նշված տեղեկություններ ստանալուց հետո:

8.3. Հաճախորդի կողմից յուրաքանչյուր գործառնություն իրականացնելուց առաջ գործարքն իրականացնող աշխատակիցը համեմատում է հաճախորդի ստորագրության և կնիքի նմուշը հաճախորդի կողմից ներկայացված ստորագրությունների և կնիքի նմուշների հետ, ստուգում հաճախորդի՝ համաձայն «Ճանաչիր հաճախորդիդ» սկզբունքի ներկայացված տվյալների համապատասխանությունը կատարվող գործառնության հետ:

8.4. Եթե հաճախորդը կատարում է 20 մլն ՀՀ դրամ և գերազանցող կանխիկ գործարք կամ մեկ գործառնական օրվա ընթացքում հաճախորդի կողմից կատարվող կանխիկ մուտքերը կամ ելքերը գերազանցում են 20 մլն ՀՀ դրամը, ապա հաճախորդը պետք է լրացնի «Հաճախորդի կողմից իրականացվող խոշոր կանխիկ գործարքի վերաբերյալ» [eFO 72-12-08](#) հայտարարությունը: Ընդ որում՝ հայտարարությունը կարող է չպահանջվել հետևյալ դեպքերում.

ա) վարկերի կանխիկ ստացման և մարման գործարքների ժամանակ,

բ) հաճախորդներ սպասարկող ստորաբաժանումների կողմից Ֆինանսական անվտանգության բաժին ներկայացրած գրավոր առաջարկության հիման վրա, որով հիմնավորված կլինեն հաճախորդին խոշոր կանխիկ գործարքների իրականացումը բնորոշ լինելը և գործարքների ՓԼ/ԱՖ առնչություն չունենալը:

8.5. Բանկը ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով պետք է հաշվառի և պահպանի Օրենքով պահանջվող առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝


ա) հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները և գործարար թղթակցության տվյալները՝ գործարար հարաբերության ավարտից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ Օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար.

բ) գործարքի (գործարար հարաբերության) հիմնական պայմանների վերաբերյալ տվյալները, որոնք հնարավորություն կտան վերականգնելու գործարքի (գործարար հարաբերության) իրական պատկերը՝ գործարքի կատարումից (գործարար հարաբերության դադարեցումից) հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ Օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար.

գ) գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության որոշման նպատակով կատարված ցանկացած վերլուծություն և կատարված այլ գործողությունների վերաբերյալ տվյալներ.

դ) կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև հաշվետվության հիմքում ընկած տեղեկություններն ու հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ հարցի քննարկումների արձանագրությունները.

ե) կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին այն տվյալներն ու ենթադրու-

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 17/22</i>

թյունները, որոնց հետ կապված՝ ՀՀ կենտրոնական բանկ չի ներկայացվել կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

8.6. Օրենքով պահանջվող և Բանկի կողմից պահպանվող տեղեկատվությունը պետք է բավարար լինի ՀՀ կենտրոնական բանկի կողմից կամ օրենքով սահմանված դեպքերում քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից հարցվող գործարքների (գործարար հարաբերությունների) վերաբերյալ ամբողջական տեղեկությունների տրամադրման համար:

8.7. Բանկը պետք է ապահովի հաշվառված ու պահպանվող տեղեկատվության անվտանգությունը, գաղտնիությունը և կանխի դրա չթուլատրված օգտագործումը, տնօրինումը:

8.8. Յուրաքանչյուր օր կատարվում է տվյալ օրը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների ավտոմատ պահպանում սերվերի վրա:

8.9. Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության թարմացումը կարգավորվում է ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում հաճախորդների տվյալների թարմացման գործընթացը» [eFO 72-02-12](#) փաստաթղթի համաձայն: Հաճախորդի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվությունն ենթակա է թարմացման առնվազն տարին մեկ անգամ: Թարմացման գործընթացի կազմակերպման համար Ֆինանսական անվտանգության բաժնի առաջարկությամբ Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից առնվազն տարին մեկ անգամ հաստատվում է հաճախորդների տվյալների թարմացման հիմնական նպատակները և պլանավորումը սահմանող փաստաթուղթը:

ԳԼՈՒԽ 9. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ: ԲԱՆԿԵՐՈՒՄ ԿԱՄ ԲԱՆԿԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇԻՎՆԵՐ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ՓԱԿԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ: ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԴԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

9.1. Բանկը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններն իրականացնում է միայն Օրենքով և սույն կարգով սահմանված անհրաժեշտ տեղեկությունները ստանալուց և Օրենքին, սույն կարգին համապատասխան գրառելուց հետո:

9.2. Գործարքն իրականացնող աշխատակիցն իրավունք չունի բացել, սպասարկել կամ տրամադրել՝

- ա) անունը կամ մտացածին անուններով հաշիվներ, ինչպես նաև այլ վճարային փաստաթղթեր.
- բ) միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ:

9.3. Գործարքն իրականացնող աշխատակիցները դրամական փոխանցումներ իրականացնելիս, անկախ հաշվի բացման հանգամանքից, սույն կարգի 7-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով պետք է պարզեն և ստուգեն փոխանցումներ կատարողների ինքնությունը: Ինքնությունը պարզելու և ստուգելու նպատակով պետք է պահանջվեն և պահպանվեն փոխանցում կատարողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

- ա) անունը, ազգանունը.
- բ) հաշվի համարը (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը).
- գ) անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

9.4. Սույն գլխի 9.3 կետով նախատեսված տեղեկատվությունը, ներառյալ՝ փոխանցումը կատարողի հաշվի համարը (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը) պետք է ներառվեն փոխանցմանն ուղեկցող վճարման հանձնարարականում:


9.5. Բանկը պետք է պահպանի սույն գլխով սահմանված և նույնականացման արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև հաշվի (բացակայության դեպքում՝ փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարի) վերաբերյալ տվյալներն ու գործարար նամակագրությունը՝ սույն կարգի 8.5 և 8.6 կետերով սահմանված կարգով և ժամկետում:

9.6. Հաճախորդի նույնականացման և գործարքի (գործարար հարաբերության) վերաբերյալ տվյալները հարցման դեպքում պետք է տրամադրվեն ՀՀ կենտրոնական բանկին:

9.7. Սույն գլխով նախատեսված պարտավորությունները չեն կիրառվում՝

- ա) բանկերի միջև իրենց անունից կատարվող փոխանցումների նկատմամբ.
- բ) կրեդիտային կամ դեբետային քարտերով իրականացվող գործարքների նկատմամբ, եթե գործարքի պայմաններում առկա է այդ քարտերի համարների վերաբերյալ տեղեկատվություն:

9.8. Բանկը պետք է հավելյալ ուսումնասիրություն իրականացնի այն անձանց (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունների) հետ գործարար հարաբերություն հաստատելիս կամ միանգամյա գործարք կնքելիս, որոնք բնակվում (գտնվում) են օտարերկրյա պետություններում կամ տարածքներում, որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 18/22</i>

9.9. Բանկի, Օրենքի, դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի, սույն կարգի պահանջների պահպանմամբ այլ բանկերի թղթակցային հաշիվների բացման և վարման, ինչպես նաև այլ բանկերում իր թղթակցային հաշիվների բացման և վարման առանձնահատկությունները սահմանվում են Բանկում գործող «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ թղթակցային հաշիվների բացման, վարման և փակման ընթացակարգով [ACBA 72 PR 12](#):

9.10. Բանկի և դրամական փոխանցումների հատուկ համակարգերի միջև համագործակցությունը և առանձնահատկությունները ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից դրամական փոխանցումների հատուկ համակարգերով գործառնությունների իրականացման կարգով [ACBA 72 ORD 27](#):

9.11. Բանկի, Օրենքի, դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի, սույն կարգի պահանջների պահպանմամբ հաճախորդների բանկային հաշիվների բացման և վարման այլ առանձնահատկությունները, պահանջվող փաստաթղթերի ցանկը սահմանվում են Բանկում գործող «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ընթացիկ (հաշվարկային) հաշիվների բացման, վարման, հսկման և փակման ընթացակարգով [ACBA 72 PR 01](#):

9.12. Բանկը թղթակցային հաշիվներ չի բացում.

ա) այն օտարերկրյա պետությունում կամ տարածքում գործող բանկերում կամ բանկերի համար, որտեղ բացակայում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրությունը,

բ) տվյալ երկրի իրավասու մարմնի կողմից անվճարունակ ճանաչված բանկերում կամ բանկերի համար,

գ) այն բանկերում կամ բանկերի համար, որտեղ արգելվում է բացել թղթակցային հաշիվներ՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան իրավական ակտերի,

դ) կեղծ («շել») բանկերում:

ԳԼՈՒԽ 10. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ ԵՎ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ


10.1. Բանկն իրավունք ունի փողերի լվացման կասկածի առկայության դեպքում մինչև 5 օրով, իսկ ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերին տրամադրված անձանց նույնականացման կամ տիպաբանությունների համընկնման դեպքերում կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում պարտավոր է 5 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին անմիջապես ՀՀ կենտրոնական բանկին ներկայացնել կասկածելի գործարքի (գործարար հարաբերության) մասին հաշվետվություն:

10.2. Գործարար հարաբերությունը կամ գործարքը կարող է մինչև 5 օրով կասեցվել ՀՀ կենտրոնական բանկի որոշմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկին տրամադրված հաշվետվությունների և (կամ) վերահսկող մարմինների ներկայացրած կամ այլ տեղեկությունների վերլուծությունների հիման վրա: Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին ՀՀ կենտրոնական բանկի որոշումը պետք է կատարվի անմիջապես՝ այն Բանկի կողմից ստանալու պահից:

10.3. Բանկի կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման մասին ՀՀ կենտրոնական բանկին տեղեկացնելու կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պահից 5 օրվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը որոշում է կայացնում Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դեպքերում քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելու, կամ քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելու հիմքերը պարզելու նպատակով կասեցման ժամկետը 5 օրով (բացառիկ դեպքերում՝ 10 օրով) երկարաձգելու կամ կասեցման որոշումը վերացնելու մասին: Սույն մասում նշված ժամկետում ՀՀ կենտրոնական բանկի որոշումը Բանկին չտրամադրելու դեպքում կասեցման մասին որոշումը համարվում է վերացված:

10.4. Բանկի կամ ՀՀ կենտրոնական բանկի որոշումը՝ գործարար հարաբերությունը կամ գործարքը կասեցնելու մասին, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է վերացվել միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ Բանկի միջնորդությամբ, եթե պարզվի, որ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածը հիմնավոր չէ:

10.5. Բանկը պարտավոր է մերժել գործարար հարաբերության կամ գործարքի իրականացումը՝ չհաստատել կամ չիրականացնել գործարար հարաբերություն կամ չկնքել գործարք կամ դադարեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքի կատարումը ՀՀ կենտրոնական բանկի որոշման հիման վրա կամ եթե օրենքով սահմանված կարգով ձեռնարկված գործողությունների արդյունքում հնարավոր չի լինում կատարել սույն կարգի 7-րդ Գլխով սահմանված հաճախորդների նույնականացումը, բացառու-

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 19/22</i>

թյամբ 7.2 կետով սահմանված դեպքի:

10.6. Գործարար հարաբերության կամ գործարքի իրականացումը մերժելու դեպքում Բանկը պետք է քննարկի սույն կարգի 3-րդ գլխով սահմանված կասկածելի գործարքի մասին ՀՀ կենտրոնական բանկին հաշվետվություն ներկայացնելու հարցը:

10.7. ՀՀ կենտրոնական բանկի կողմից Բանկին տրամադրված տեղեկությունների հիման վրա անձանց նույնականացումն իրականացվում է հետևյալ կերպ. Բանկի ընդհանուր բազայում պարբերաբար մուտքագրվում է «Կասկածելի անձանց ցանկը» և ցանկացած նոր հաճախորդի տվյալները մուտքագրելիս ծրագիրը հնարավորություն է տալիս իրականացնել հաճախորդի ինքնության ստուգում՝ հաճախորդի տվյալները համեմատելով ցանկում նշված անձանց տվյալների հետ: Համապատասխանություն բացահայտելու դեպքում գործարքն իրականացնող աշխատակիցը հայտնում է Հաճախորդների սպասարկման բաժնի պետին (մասնաճյուղում՝ գլխավոր հաշվապահին, գլխավոր հաշվապահ չունեցող մասնաճյուղում՝ կառավարչին): Վերջինս դիտանցում է համընկած տվյալները և նշված համընկման վերաբերյալ հավաստիանալու դեպքում այդ մասին հայտնում Ֆինանսական անվտանգության բաժնին: Ֆինանսական անվտանգության բաժնին անմիջապես վերլուծություններ է իրականացնում համընկման վերջնական հավաստիությունը ստուգելու համար: Վերլուծությունների արդյունքում, եթե պարզվում է համընկման հավաստիությունը, Ֆինանսական անվտանգության բաժնին անմիջապես գործողություններ է իրականացնում ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցման ուղղությամբ (5-օրյա ժամկետով) և ՀՀ կենտրոնական բանկ է ներկայացնում կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն: Հակառակ դեպքում Ֆինանսական անվտանգության բաժնի հանձնարարականով Հաճախորդների սպասարկման բաժնի պետը (մասնաճյուղում՝ գլխավոր հաշվապահը, գլխավոր հաշվապահ չունեցող մասնաճյուղում՝ կառավարչին) գործարքը կասեցումից հանում է:

Սույն կետով սահմանված գործողությունների և վերլուծությունների արդյունքները փաստաթղթավորվում են և պահպանվում առնվազն 5 տարի:

10.8. Բանկում «Կասկածելի անձանց ցանկը» թարմացվում է ՀՀ կենտրոնական բանկից և այլ աղբյուրներից տեղեկատվության յուրաքանչյուր ներկայացման դեպքում և բաղկացած է հետևյալ ցանկերից՝

- ա) ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված ցանկեր,
- բ) Եվրամիության կասկածելի անձանց ցանկ,
- գ) ԱՄՆ OFAC կասկածելի անձանց ցանկ,
- դ) «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կասկածելի անձանց ցանկ:

Կասկածելի անձանց ցանկով ստուգումների գործընթացը կարգավորվում է համաձայն ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում հաճախորդների և փոխանցումների կասկածելի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ցանկերով ստուգման գործընթացը» փաստաթղթի [eFO 72-02-09](#):

10.9. Ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների սառեցման մասին որոշումը կարող է կայացնել նաև ՀՀ կենտրոնական բանկը՝ 5-օրյա ժամկետով:


10.10. Բանկի՝ ֆինանսական միջոցների սառեցման մասին որոշումը մինչև սառեցման ժամկետի ավարտը կարող է վերացվել միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ Բանկի միջնորդությամբ:

10.11. Սառեցման մասին ՀՀ կենտրոնական բանկի տեղեկանալու պահից 5 օրվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը որոշում է կայացնում դրա մասին Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դեպքերում քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելու մասին կամ սառեցման որոշումը վերացնելու մասին: ՀՀ կենտրոնական բանկի կողմից սույն կետով սահմանված ժամկետում որոշում չկայացնելու դեպքում սառեցման մասին որոշումը համարվում է վերացված:

10.12. Քրեական հետապնդման մարմինների կողմից հաղորդում ստանալու պահից սառեցման ժամկետը համարվում է 10 օրով երկարաձգված, որից հետո՝ վերացված, եթե օրենքով սահմանված կարգով կասեցումը պահպանելու գործողություններ չեն ձեռնարկվել:

ԳԼՈՒԽ 11. ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՅՏՆԱՔԵՐՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Բանկի մասնաճյուղերի գլխավոր հաշվապահները (գլխավոր հաշվապահ չունեցող մասնաճյուղերում՝ կառավարիչները, Կենտրոնական գրասենյակում՝ հաճախորդների սպասարկման բաժնի պետը և Միջբանկային և միջմասնաճյուղային հաշվարկների բաժնի պետը սույն կարգի պահանջներին համապատասխան իրականացնում են կասկածելի, արտասովոր, մերժված գործարքների (գործարար

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 20/22</i>

հարաբերությունների), փոխանցումների մյուս կողմերի և/կամ հաճախորդների կասկածելի անձանց ցանկերով համընկնումների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում, պահպանում և տրամադրում Ֆինանսական անվտանգության բաժնին՝ կիրառելով Ֆինանսական անվտանգության բաժին ներկայացվող օրական հաշվետվության ձևը [eFO 72-02-22](#): Հաշվետվությունը Ֆինանսական անվտանգության բաժին ուղարկվում է էլեկտրոնային եղանակով:

11.2. Գործարքն իրականացնող աշխատակիցները պարտավոր են կասկածելի, արտասովոր, մերժված գործարքների (գործարար հարաբերությունների), փոխանցումների մյուս կողմերի և/կամ հաճախորդների կասկածելի անձանց ցանկերով համընկնումների հայտնաբերելու դեպքում դրա մասին անմիջապես հայտնել իրենց անմիջական ղեկավարին՝ Բանկի կենտրոնական գրասենյակում՝ Հաճախորդների սպասարկման բաժնի պետին, Սիջբանկային և միջմասնաճյուղային հաշվարկների բաժնի պետին, իսկ մասնաճյուղերում՝ գլխավոր հաշվապահներին (գլխավոր հաշվապահ չունեցող մասնաճյուղերում՝ կառավարիչներին)՝ կիրառելով [eFO 72-02-21](#) էլեկտրոնային հաշվետվական ձևը: Վերջիններս կատարում են ուսումնասիրություն և կասկածները հիմնավորվելու դեպքում անմիջապես հայտնում են Ֆինանսական անվտանգության բաժին: Ֆինանսական անվտանգության բաժնում իրականացվում է տվյալ գործարքի (գործարար հարաբերության) վերաբերյալ խորացված ուսումնասիրություն և վերլուծություններ: Ֆինանսական անվտանգության բաժնի պետի նախաձեռնությամբ կազմակերպվում է տվյալ գործարքը (գործարար հարաբերությունը) կասկածելի համարելու և ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու հարցի քննարկում:

Քննարկմանը մասնակցում են Գլխավոր գործադիր տնօրենը և/կամ նրա տեղակալը, Բանկի գլխավոր հաշվապահը և/կամ նրա տեղակալը, Ռիսկերի կառավարման բաժնի պետը և Ֆինանսական անվտանգության բաժնի պետը: Քննարկման ընթացքում տարածայնություններ ի հայտ գալու դեպքում վերջնական որոշում կայացնում է Ֆինանսական անվտանգության բաժնի պետը:

Քննարկման արդյունքներն ենթակա են արձանագրման:

Հաշվապահության հաճախորդներ սպասարկող աշխատակիցները յուրաքանչյուր գործառնական օրվա ավարտին թղթային եղանակով մասնաճյուղերի գլխավոր հաշվապահներին (գլխավոր հաշվապահ չունեցող մասնաճյուղերում՝ կառավարիչներին), Կենտրոնական գրասենյակում՝ Հաճախորդների սպասարկման բաժնի պետին, Սիջբանկային և միջմասնաճյուղային հաշվարկների բաժնի պետին ներկայացնում են հաշվետվություն կասկածելի, արտասովոր, մերժված գործարքների (գործարար հարաբերությունների), փոխանցումների մյուս կողմերի և/կամ հաճախորդների կասկածելի անձանց ցանկերով համընկնումների վերաբերյալ՝ կիրառելով ստորաբաժանման ֆինանսական անվտանգության գծով օրական հաշվետվության ձևը [eFO 72-02-20](#):

11.3. Ֆինանսական անվտանգության բաժինը, Բանկի մասնաճյուղերից և կենտրոնական գրասենյակից ստանալով՝ կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվությունները կազմում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխան կասկածելի գործարքի հաշվետվություն և սույն կարգով սահմանված ժամկետներում ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկ:


11.4. Պարտադիր տեղեկացման գործարքները կազմվում և ուղարկվում են Ֆինանսական անվտանգության բաժնի կողմից կենտրոնացված եղանակով:

11.5. Ֆինանսական անվտանգության բաժինը պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման 101 հաշվետվական ձևերը ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացնում Սի-Բի-Էյ-Նեթ ցանցի միջոցով՝ հետևյալ ժամկետներում.

ա) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվությունը՝ այդ գործարքը կնքելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում,

բ) կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունը՝ գործարքում (գործառնությունում) կասկածելի գործարքի հիմքեր և չափանիշներ հայտնաբերելու դեպքում նույն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ն:

11.6. Բանկի մասնաճյուղերի գլխավոր հաշվապահները (գլխավոր հաշվապահ չունեցող մասնաճյուղերում՝ կառավարիչները), Կենտրոնական գրասենյակում՝ Հաճախորդների սպասարկման բաժնի պետը և Քարտային հաշիվների սպասարկման բաժնի պետը սույն կարգի պահանջներին համապատասխան իրականացնում են բարձր ռիսկային հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրում, պահպանում և, անհրաժեշտության դեպքում համաձայն Ֆինանսական անվտանգության բաժնի գրավոր կամ բանավոր հարցման, տրամադրում Ֆինանսական անվտանգության բաժնին: Հաճախորդների բարձր ռիսկայնության չափանիշներն որոշվում են համաձայն ««ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ բարձր ռիսկային հաճախորդների և բարձր ռիսկային գործունեության ոլորտների ցանկ»-ի

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ		ACBA 72 ORD 37#6	
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ		<i>Խմբագրման ամսաթիվ</i> 13/11/13	<i>Խմբագրություն</i> 5 Էջ 21/22

[eFO 72-02-05:](#)

11.7. Բարձր ռիսկային հաճախորդների համար բանկային հաշվի բացման կամ պլաստիկ քարտ պատվիրելու դեպքում Ֆինանսական անվտանգության բաժնում կատարվում է այդ հաճախորդների տվյալների ուսումնասիրություն, և էլեկտրոնային եղանակով՝ հատուկ ծրագրային ապահովման միջոցով, ակտիվացվում հաճախորդի համար բացված բանկային հաշիվը կամ հաստատվում պլաստիկ քարտի պատվերը:

ԳԼՈՒԽ 12. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԱՔԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

12.1. Ֆինանսական անվտանգության բաժինը Բանկի ուսումնամեթոդաբանության բաժնի հետ համատեղ պարբերաբար ուսուցում է կազմակերպում ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող բոլոր աշխատակիցների համար:

12.2. Ուսուցման ծրագրերին մասնակցում են՝

- ա) Բանկի խորհրդի անդամները (ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ),
- բ) Գլխավոր գործադիր տնօրենը և վերջինիս տեղակալները (ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ),
- գ) Բանկի գլխավոր հաշվապահը (ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ),
- դ) Ներքին աուդիտի, Ռիսկերի կառավարման, Կորպորատիվ հաճախորդների, Միջազգային գործառնությունների սպասարկման, Հաճախորդների սպասարկման, Քարտային հաշիվների սպասարկման և Միջբանկային և միջմասնաճյուղային հաշվարկների բաժինների աշխատակիցները (ոչ պակաս, քան տարին մեկ անգամ),
- ե) մասնաճյուղերի կառավարիչները, կառավարիչների տեղակալները և գլխավոր հաշվապահները (ոչ պակաս, քան տարին մեկ անգամ),
- զ) դրամարկղի վարիչները, գործառնավարները, բանկային գործառնությունների խորհրդատուները (ոչ պակաս, քան տարին մեկ անգամ),
- է) վարկային գործակալները, քարտային մասնագետները, բեք-օֆիսի աշխատակիցները (ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ),
- ը) այլ աշխատակիցները (ըստ անհրաժեշտության):


Ուսուցումը և վերապատրաստումը հնարավորություն է տալիս հավաստիանալու, որ նրանք ունեն ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների ու ընթացակարգերի վերաբերյալ պատշաճ գիտելիքներ, մասնավորապես՝

- ա) բարձր և ցածր ռիսկի չափանիշների, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության առավել հաճախ հանդիպող հիմքերի և չափանիշների վերաբերյալ, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի ուղեցույցներով տրամադրվող կասկածելի գործարքների տիպաբանությունների վերաբերյալ,
- բ) Օրենքի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի և սույն կարգի և Բանկի ներքին իրավական ակտերի դրույթների վերաբերյալ,
- գ) հաճախորդի պատշաճ ուսումնասիրության և կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու պարտականությունների վերաբերյալ,
- դ) Ֆինանսական հաստատությունների կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառման վերաբերյալ:

12.3. Նոր աշխատակիցների ընդունման դեպքում առաջին երեք ամիսների ընթացքում ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով ուսուցում է կազմակերպվում Ֆինանսական անվտանգության բաժնի կողմից:

12.4. ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով իրականացվող ուսուցման ծրագրերը, դրանց վերաբերյալ բոլոր նյութերը, ինչպես նաև ուսուցման ծրագրերին մասնակցած անձանց անուններն ու ստորագրությունները Ֆինանսական անվտանգության բաժնում առանձին հաշվառվում և պահպանվում են առնվազն 5 տարի:

12.5. Ներքին աուդիտը խորհրդին և Բանկի գլխավոր գործադիր տնօրենին, նրա տեղակալներին և Բանկի գլխավոր հաշվապահին պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման ու վերապատրաստման համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:

	ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	ACBA 72 ORD 37#6		
	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԳ	<i>Խմբագրման ամսաթիվ 13/11/13</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>Էջ 22/22</i>

ԳԼՈՒԽ 13. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՅԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13.1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հետ առնչվող ռիսկեր կարող են ի հայտ գալ Բանկի կողմից իրականացվող այնպիսի գործառնություններում, ինչպիսիք են վճարման համակարգերի միջոցով դրամական միջոցների ստացումը և փոխանցումը, հաճախորդների հաշիվների բացումը և վարումը, Բանկում ավանդային գործառնությունների իրականացումը, բանկային հաշիվներին կանխիկ մուտքագրումների և ելքագրումների իրականացումը, արժեթղթերի և արժեքների ի պահ ընդունումը, թղթակցային հաշիվների բացումը և վարումը, չեկերի տրամադրումը և սպասարկումը:

13.2. Սույն կարգի 13.1 կետում նշված գործառնություններում հնարավոր ռիսկերի զսպման և կառավարման նպատակով Բանկում կատարվում են իրականացված գործարքների ամենօրյա ուսումնասիրություններ՝ հաճախորդների եկամուտների ծագման աղբյուրների և իրական շահառուների հայտնաբերման նպատակով թղթակից բանկերի կողմից իրականացվող՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին ընթացակարգերի պարբերական գնահատում, բարձր ռիսկի չափանիշների, ՓԼ/ԱՖ հնարավոր սխեմաների սահմանում և պարբերական թարմացում, հաճախորդների կողմից կատարված գործարքների և հայտնաբերված ռիսկային գործարքների վերաբերյալ վիճակագրական տվյալների մշտական վերլուծություն, Բանկի աշխատակիցների համար թրեյնինգների պարբերական կազմակերպում, ՀՀ կենտրոնական բանկի պահանջներով և մեթոդական ցուցումներով նախատեսված՝ FATF սկզբունքներից, ինչպես նաև միջազգային լավագույն փորձից բխող այլ միջոցառումներ:

Վերը նշված գործառնություններն իրականացնելիս Բանկն առաջնորդվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ռիսկերի վրա հիմնված մոտեցումներով:

13.3. Բանկի ներքին աուդիտը տարեկան առնվազն մեկ անգամ ստուգումներ է իրականացնում՝ հավաստիանալու, որ Բանկի գլխավոր գործադիր տնօրենը, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալները, Գլխավոր հաշվապահը և Ֆինանսական անվտանգության բաժինն ապահովում են Բանկի լիարժեք համապատասխանությունը Օրենքով, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգով, այլ իրավական ակտերով, սույն կարգով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական այլ ակտերով սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 14. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 8-ից:

14.2. Սույն կարգն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Բանկի խորհրդի 10.04.2012թ. հաստատած «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կարգը: